

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը

## Շուշիի ազատագրման օրվա և Մեծ հայրենականում տարած

### հաղթանակի կապակցությամբ

07.05.2018



Միբելի՛ վայոցձորցիներ, Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի վայոցձորցի թանկագին՝ վետերաններ, Հայոց բանակի հարգարժան գեներալներ, սպաներ, զինվորներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիս Շուշիի ազատագրման օրվա և Մեծ հայրենականում տարած հաղթանակի կապակցությամբ:

1992 թվականի մայիսի 8-ին ազատագրվեց Շուշին և մայիսի 9-ն այնուհետ մեր ժողովրդի համար ձեռք բերեց կրկնակի հաղթանակի խորհուրդ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայ ժողովուրդը, ԽՄ մյուս ժողովուրդների հետ համատեղելով ուժերը, ընդհանուր պայքարի արդյունքում հաղթեց ֆաշիզմի դեմ մղվող պատերազմը, տոնելով զրկանքների ու համառ պայքարի գնով ձեռք բերած Մեծ Հաղթանակը: Իսկ Արցախի ազատագրական պայքարում, անօրինականորեն Ադրբեջանին բռնակցված Արցախի ազատագրումը կայացավ Հայաստան-Արցախ- Սփյուռք եռամիասնության ու ազատագրական պայքարում ընկած մեր քույր եղբայրների, մեր պատանիների ու անգամ ծերունագարդ պապիկների կյանքի գնով: Արցախի ազատամարտը իրավամբ դարձավ նոր սերնդի հերոսապատումի մերօրյա վկան:

Միբելի վայոցձորցիներ՝ ր, որպես սահմանամերձ մարզի բնակիչներ, այսօր մենք առավել քան բարձր ենք գնահատում խաղաղության գինը: Ձեռք բերվեց խաղաղություն, որը մեզանից իլեց հարյուրավոր մեր զավակներին: Մեր քաջ զավակներն իրենց կյանքը չխնայեցին թեկուզև փխրուն խաղաղության հաստատման համար: Թող լույս իջնի նրանց սուրբ շիրիմներին:

Համոզված եմ, որ նրանց նվաճած խաղաղությունը պահպանելու համար բոլորս ենք պատրաստ կանգնելու մեր հերոսացած բանակի կողքին՝ համալրելով Հայոց բանակի շարքերը, անհրաժեշտության դեպքում՝ կրկնելու մեր նահատակված զավակների սխրանքը: Մակայն այսօր բոլորիս մաղթում եմ խաղաղ գործունեություն, ի շահ մեր հայրենիքի, ի բարօրություն մեր ժողովրդի:

Թանկագին բարեկամներ, կրկին շնորհավորում եմ մայիսյան եռատոնի կապակցությամբ: Շնորհավոր տոնդ, հա՛յ զինվոր, փառք ու պատիվ քեզ, Հայո՛ց հաղթանակած բանակ: